

քիւնները: Ընկերութեան կանոնագրի 7րդ. յօդածըլ տրամադրում է. «Հրատարակել հայ տղոց եւ պատսններու համար հայերէն դասագրքեր, գրական գործեր եւ հանդէսներ. տարածել հայ հասարակութեան խաւերուն մէջ արեւմբւեան մշակոյքը, ինչպէս նաև ժամօրացրնել օտարներուն հայ մշակոյքը»: Հաստատել յառուկ մրցանակ՝ ընկերութեան շահին մէկ մասովը, քաջալերելու համար արժէքաւոր գրական գործերը»:

Ընկերութիւնը առաջնա հերթին ձեռնարկել է մանկական գրականութեան հրատարակութեան՝ իիմք դնելով «Մասիս» մանկական մատնեաշարին, որից տարեկան պէտք է լոյս տեսնէ 24 գըրքոյլ՝ իւրաքանչիւրը 32 էջից բաղկացած: Արդէն լոյս են տեսել երեք գըրքոյլիները: Հրատարակութիւնը արտաքինով գեղեցիկ է - ընտիր քուլք, մաքուր տիպ, խոշոր տառեր, պատկերազարդ: Կողքի վրա Մեծ ու Փոքր Մասիսների եւ Արաքսի նկարը: Գինը շատ

մատչելի: Մատենաշարը պէտք է իր մէջ ամփոփէ հայ եւ օտար մանկական գրականութեան լաւագոյն մասը: 24 գրքոյլի տարեկան բաժնեգինն է 2 դռար կամ 30 ֆր. Քրանկ: Բաժանորդագրել կարելի է եւ «Վէմ»-ի միջոցով:

#### «ՍԵՒԱՆ» ՀՐԱՏ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Բոստոնում կազմւած է «ՍԵՒԱՆ» անունով հրատարակչական մի ընկերութիւն, որ հրատարակելու է ժողովրդական - հանրամատչելի գրքեր հայ եւ օտար լեզուներով: Արդէն տպագրութեան է յանձնած մոտ մի տարի առաջ Հայաստանից դուրս եկած եւ վերչերս «Հայրենիք»-ում մի շարք հետաքրքրական յօդածներ ստորագրող կջմիածնեցին «Տասն եւ հինգ տարի պոլշեւիկ երկիրներու մէջ» աշխատութիւնը: «ՍԵՒԱՆ»-ը պիտի հրատարակէ նաև Համաստեղի երկիրի անգլիերէն թարգմանութիւնը:

